ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 104

«16» 11 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 99 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի նոյեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում արձակուրդի և գործուղման հրամանների, ինչպես նաև ծառայողական վկայականների ստորագրման լիազորությունների նոր բաշխում կատարելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հուլիսի 4-ի N 53, N 54, N 55 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 99 հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետի 2-րդ ենթակետում «**Գ. Բաղդասարյանը**» բառերը փոխարինել «**Ա. Մանասյանը**» բառերով:

2. Հրամանի 1-ին կետում լրացնել նոր 2.1-ին ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«**2.1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գ. Բաղդասարյանը ստորագրում է** իր համակարգման ոլորտում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տեղակալների, ավագ դատախազների և դատախազների արձակուրդի ու գործուղման հրամանները, բացառությամբ սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված դեպքի, ինչպես նաև նրանց ծառայողական

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ